Հաստատվել է՝
Տնօրինության 19.08.2024թ.
Թիվ 02/120/24 որոշմամբ
Տնօրինության նախագահ-
Գլխավոր տնօրենի ժ/պ՝
Հովհաննես Թորոյան
Ուժի մեջ է՝02.09.2024թ

«Ամերիաբանկ» ՓԲԸ
+37410 561111, office@ameriabank.am

ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Երևան **___ _____20___թ.**

_____ն /այսուհետ՝ **Մատակարար/,** ի դեմս տնօրեն _____, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն /այսուհետ՝ **Գնորդ/**, ի դեմս _____, ով գործում է Տնօրինության նախագահ-Գլխավոր տնօրեն Արտակ Հանեսյանի կողմից ____/_____/_____թ. տրված լիազորագրի հիման վրա, մյուս կողմից /այսուհետ՝ միասին Կողմեր, իսկ առանձին՝ Կողմ/, կնքեցին մատակարարման սույն պայմանագիրը /այսուհետ՝ **Պայմանագիր/** հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Մատակարարը պարտավորվում է Պայմանագրի համաձայն Գնորդին մատակարարել թվով _____ հատ _____ Հավելված 1-ում /այսուհետ՝ Հավելված/ նշված մանրամասներին/տվյալներին համապատասխան /այսուհետ՝ **Ապրանք/**, տեղափոխել և տեղադրել Գնորդի կողմից նշված վայր՝ այն է՝ ք. Երևան, _____, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել պատշաճ կերպով մատակարարված և սույն Պայմանագրի և Հավելվածի պահանջներին համապատասխանող Ապրանքը, տրամադրել համապատասխան պայմաններ Ապրանքը տեղադրելու համար և վճարել դրա դիմաց:

1.2 Պայմանագրի բոլոր Հավելվածները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը:

2 Մատակարարման և տեղադրման պայմանները

2.1 Մատակարարն Ապրանքը պարտավորվում է հարկային հաշվով մատակարարել և տեղադրել մինչև 20____թ. _____ ____-ը:

2.2 Մատակարարն Ապրանքը պետք է մատակարարի Գնորդի կողմից նշված վայր՝ Պայմանագրի 1.1 կետում նշված հասցեով և կրի մատակարարման հետ կապված բոլոր ծախսերը՝ ներառյալ նշված վայր տեղափոխման, տեղադրման, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված այլ ծախսեր, որոնք անհրաժեշտ են Մատակարարի կողմից Պայմանագրով սահմանված պարտավորությունները պատշաճ կատարելու համար:

2.3 Մատակարարն Ապրանքը մատակարարելիս պետք է Գնորդին ներկայացնի.

2.3.1 հաշիվ-ապրանքագիր, որում նշված են Ապրանքի նկարագրությունը, քանակը, միավորի առանձին գինը և Ապրանքի ընդհանուր գինը,

2.3.2 Արտադրողի կամ Մատակարարի երաշխիք,

2.4 Պայմանագրով մատակարարված Ապրանքի տեղադրումից և ընդունումից հետո Գնորդը ստանձնում է Ապրանքի պահպանման ռիսկը, իսկ մինչ Ապրանքի ընդունումը տվյալ ռիսկն ամբողջությամբ կրում է Մատակարարը:

2.5 Ապրանքի նկատմամբ սեփականության իրավունքը Գնորդին փոխանցված է համարվում Պայմանագրով սահմանված կարգով Մատակարարի կողմից Ապրանքը Գնորդին հանձնելու պահից:

3 Պայմանագրի գինը և վճարման պայմանները

3.1 Ապրանքի մատակարարման (ներառյալ տեղափոխման և տեղադրման աշխատանքները) գինը **(այսուհետ՝ Գին)** կազմում է _____ /_____/ ՀՀ դրամ, ներառյալ բոլոր հարկերը: Ընդ որում սույն կետում նշված գինը ներառում է նաև Մատակարարի կողմից Ապրանքը Գնորդի նշած վայր տեղափոխելու, նշված վայրում տեղադրելու, երաշխիքային սպասարկման և Պայմանագրով չնախատեսված բոլոր այլ ծախսերը:

3.2. Պայմանագրի Գինը ենթակա է Մատակարարին վճարման մատակարարված Ապրանքի համար համապատասխան հարկային հաշիվը ներկայացվելուց հետո 15 (տասնհինգ) բանկային օրվա ընթացքում, եթե ապահովված են սույն պայմանագրի 2.2 և 2.3 կետերով սահմանված պայմանները:

4. Կողմերի իրավունքները և պարտականությունները

4.1 Մատակարարն իրավունք ունի՝

4.1.1 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրի պայմաններին համաձայն մակատարարված Ապրանքի և կատարված տեղափոխման և տեղադրման աշխատանքների համար:

4.2 Մատակարարը պարտավոր է՝

4.2.1 Ապրանքը Գնորդին մատակարարել և հանձնել անձամբ, Պայմանագրով նախատեսված պայմաններով, ժամկետներում, որակով և կարգով, ինչպես նաև պատշաճորեն Գնորդի կողմից նշված վայրում տեղադրել մատակարարված Ապրանքը.

4.2.2 Իրականացնել Ապրանքի ստանդարտ փաթեթավորումը, որը սովորաբար պահանջվում է նմանատիպ Ապրանքների տեղափոխման համար՝ Ապրանքը նպատակավայր տեղափոխելու ընթացքում Ապրանքի վնասումը կամ այլ կերպ փչացումը կանխելու նպատակով.

4.2.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ և որևէ այլ իրավունքով կամ այլ կերպ չծանրաբեռնված և Պայմանագրով որոշված տեսականու, քանակի և որակի Ապրանք.

4.2.4 Պատշաճ որակով և ժամկետներում իրականացնել մատակարարված և տեղադրված Ապրանքի երաշխիքային սպասարկումը.

4.2.5 Ապահովել մատակարարված Ապրանքի պատշաճ որակը:

4.3 Գնորդն իրավունք ունի՝

4.3.1 Մատակարարի կողմից Պայմանագրի պայմաններին համաձայն Ապրանքը չհանձնելու, չտեղափոխելու և/կամ չտեղադրելու, այդ թվում՝ Հարակից ծառայությունները, այն է՝ Ապրանքի տեղափոխման, տեղադրման, ինչպես նաև Մատակարարի կողմից Պայմանագրով սահմանված որևէ այլ ծառայություն չմատուցելու դեպքում, հրաժարվել այն ընդունելուց և պահանջել հատուցելու Պայմանագրով սահմանված Մատակարարի պարտականությունների չկատարման, կամ ոչ պատշաճ կատարման համար Գնորդին հասցված վնասները և վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը ____ /_____/ աշխատանքային օրվա ընթացքում:

4.3.2 Եթե Մատակարարը Գնորդին հանձնել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք՝ Մատակարարից պահանջել անհապաղ լրացնելու պակաս հանձնած քանակը:

4.3.3 Եթե հանձնված է անպատշաճ որակի կամ Պայմանագրին չհամապատասխանող Ապրանք իր ընտրությամբ պահանջել

ա. համաչափ պակասեցնելու Ապրանքի գինը

բ. Հատուցելու Ապրանքի թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերը

գ. անհատույց փոխարինել անպատշաճ որակի կամ Պայմանագրին չհամապատասխանող Ապրանքը:

4.4 Գնորդը պարտավոր է՝

4.4.1 կատարել Պայմանագրի պահանջներին համապատասխան ստացված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները և ժամանակին վճարել դրա դիմաց.

4.4.2 ստուգել Ապրանքի քանակն ու որակը և հայտնաբերված թերությունների մասին ողջամիտ ժամկետներում տեղեկացնել Մատակարարին:

5 Ապրանքի որակը և երաշխիքային սպասարկումը

5.1 Մատակարարն երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը Ապրանքի որակի սերտիֆիկատներին ու միջազգային ստանդարտների պահանջներին: Սույն կետով սահմանված պարտավորության համար Մատակարարը կրում է պատասխանատվություն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.2 Պայմանագրով Ապրանքի և վերջինիս բաղկացուցիչ մասերի վրա տարածվում է Մատակարարի երաշխիքը՝ Ապրանքի մատակարարումից և համապատասխան հարկային հաշվի դուրսգրման օրվանից հետո _____ (_____) ամիս ժամկետով:

5.3 Պայմանագրի 5.2 կետում նշված երաշխիքային ժամկետի ընթացքում առաջացած բոլոր անսարքությունները, թերությունները վերացվում են Մատակարարի կողմից ողջամիտ ժամկետում առանց լրացուցիչ վճարի: Այն դեպքում, երբ Ապրանքի անսարքությունների և թերությունների վերացման համար պահանջվում է ___ (_____) աշխատանքային օրից ավելի ժամկետ, Մատակարարը պարտավորվում է ոչ ուշ քան _____ (_____) աշխատանքային օրվա ընթացքում Գնորդի ժամանակավոր օգտագործմանը տրամադրել համապատասխան և համարժեք գույք, որոնցով կապահովվի Գնորդի աշխատանքների անընդհատությունը: Այն դեպքում, երբ պարզվում է, որ Ապրանքի անսարքությունների կամ թերությունների վերացումն անհնար է, ապա Մատակարարը պարտավորվում է անսարք Ապրանքն առանց լրացուցիչ վճարի փոխարինել ...../...../ օրվա ընթացքում նոր Ապրանքով, որը կունենա միևնույն տեխնիկական չափանիշները:

6 Կողմերի պատասխանատվությունը

6.1 Պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերը պատասխանատվություն են կրում Պայմանագրով սահմանված կարգով, ընդ որում պայմանագրով սահմանված տուժանքի (տույժի և/կամ տուգանքի) փաստացի կիրառման դեպքում տուժանքի տարեկան դրույքաչափը և/կամ տուժանքների հանրագումարի չափը գործում է ՀՀ օրենսդրությամբ նշված թույլատրելի առավելագույն չափերի սահմաններում:

6.2 Ապրանքի չմատակարարման կամ անպատշաճ մատակարարման և/կամ Պայմանագրով սահմանված ծառայությունների չմատուցման կամ ոչ պատշաճ մատուցման, ինչպես նաև Ապրանքի փոխադրման և տեղադրման պարտավորությունների չկատարման և/կամ ոչ պատշաճ կատարման համար Մատակարարը Գնորդի գրավոր պահանջի դեպքում վերջինիս վճարում է տույժ կետանցի յուրաքանչյուր օրվա համար Պայմանագրի 3.1 կետով սահմանված Պայմանագրի ընդհանուր գնի 0.1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով՝ բայց ոչ ավել քան Պայմանագրի գնի 10 (տասը) տոկոսի չափով:

6.3 Մատակարարի կողմից Պայմանագրով սահմանված ժամկետում Պայմանագրով սահմանված ծառայությունները, այդ թվում Ապրանքի փոխադրման և տեղադրման ծառայությունները չմատուցելու դեպքում, Մատակարարը Գնորդի գրավոր պահանջի դեպքում հատուցում է իր պարտավորության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով Գնորդի կողմից կատարված բոլոր ծախսերը և կրած վնասները:

6.4 Պայմանագրով նախատեսված ժամկետներում վճարումը չկատարելու դեպքում, Գնորդը Մատակարարի գրավոր պահանջի դեպքում վերջինիս վճարում է տույժ վճարման ենթակա

չվճարված գնի 0.1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով, բայց ոչ ավել քան Պայմանագրի գնի 10 (տասը) տոկոսի չափով:

6.5 Պայմանագրով նախատեսված տույժերի վճարումը համապատասխան Կողմին չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտավորությունից:

7 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ֆորս-մաժոր)

7.1 Կողմերն ազատվում են Պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվությունից, եթե այդ պարտավորությունների պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի հետևանքով:

7.2 Պայմանագրի իմաստով անհաղթահարելի ուժ են համարվում այնպիսի արտակարգ հանգամանքները, որոնք ծագել են Պայմանագրի կնքումից հետո՝ չհանդիսանալով Կողմերից որևէ մեկի մեղքի հետևանք, տվյալ պայմաններում ողջամտորեն չէին կարող կանխատեսվել կամ կանխարգելվել Կողմերի կողմից և օբյեկտիվորեն անհնարին են դարձնում պարտավորության պատշաճ կատարումը: Այդպիսի հանգամանքներ կարող են լինել, ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ բնական աղետները (երկրաշարժեր, ջրհեղեղներ, փոթորիկներ և այլն), սոցիալական անկարգությունները, պատերազմը՝ այդ թվում քաղաքացիական պատերազմը, ռազմական գործողությունները, գործադուլները, հասարակական անկարգությունները, համաճարակը, համավարակը, պետական իրավասու մարմինների կամ տեղական ինքնակառավարման մարմինների գործողությունները, այդ թվում նաև՝ այդ մարմինների կողմից Կողմերի նկատմամբ պարտադիր իրավական ուժ ունեցող այնպիսի որոշումների կայացումը/իրավական ակտերի ընդունումը, և այլ նման հանգամանքներ, որոնք անհնարին են դարձնում պարտավորության պատշաճ կատարումը:

7.3 Անհաղթահարելի ուժի ազդեցության հանգամանքներում հայտնված Կողմը պարտավոր է դրա ծագման պահից 24 (քսանչորս) ժամվա ընթացքում Պայմանագրով նախատեսված կարգով տեղեկացնել մյուս Կողմերին այդ մասին:

7.4 Կողմը չի կարող վկայակոչել անհաղթահարելի ուժի առկայության մասին և ազատվել Պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման պատասխանատվությունից, եթե չեն պահպանվել սույն գլխով նախատեսված կարգը և պայմանները, որպիսի դեպքում շարունակում են գործել Պայմանագրով նախատեսված պատասխանատվության պայմանները:

7.5 Եթե անհաղթահարելի ուժի ազդեցության հանգամանքները տևում են 2 (երկու) ամսից ավելի, ապա այն Կողմը, ում նկատմամբ ստանձնած պարտավորությունները չեն կատարվում կամ ոչ պատշաճ են կատարվում այդ հանգամանքների հետևանքով, իրավունք ունի միակողմանիորեն լուծել Պայմանագիրը՝ այդ մասին 10 (տասն) աշխատանքային օր առաջ Պայմանագրով սահմանված կարգով ծանուցելով մյուս Կողմին:

7.6 Պայմանագրի 7.2-րդ կետով սահմանված հանգամանքների վերանալու դեպքում Կողմերը 24 (քսանչորս) ժամվա ընթացքում տեղյակ են պահում միմյանց և հայտնում են պայմանագրային պարտավորությունների կատարումը վերսկսելու ժամկետի մասին:

7.7 Կողմերը սույնով արձանագրում են, որ անհաղթահարելի ուժի առկայությունը չի հանդիսանում Պայմանագրով ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարումից ազատման հիմք, եթե այլ բան ուղղակիորեն սահմանված չէ ՀՀ օրենսդրությամբ:

8 Պայմանագրի ժամկետը և վեճերի լուծման կարգը

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից: Կողմերի պարտավորությունները դադարում են Պայմանագրի պատշաճ կատարմամբ:

8.2 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրության համաձայն:

9 Հակակոռուպցիոն վերապահություն

9.1 Կողմերից յուրաքանչյուրը սույնով պարտավորվում է պահպանել հակակոռուպցիոն օրենսդրության պահանջները և չձեռնարկել որևէ գործողություն, որով կարող են խախտվել հակակոռուպցիոն օրենսդրության պահանջները, կապված Պայմանագրով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ, այդ թվում (բայց չսահմանափակվելով)՝ չկատարել առաջարկ, չտալ համաձայնություն, խոստում, չիրականացնել ոչ օրինական վճարումներ, ներառյալ (բայց չսահմանափակվելով) կաշառքը՝ փողի կամ ցանկացած այլ տեսքով, որևէ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց, ներառյալ (բայց չսահմանափակվելով)՝ առևտրային կազմակերպություններին, պետական և (կամ) տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց, մասնավոր ընկերություններին և նրանց ներկայացուցիչներին:

9.2 Կողմերից որևէ մեկի կողմից Պայմանագրի 9.1 կետով նախատեսված պարտականությունների խախտման և հիմնավոր ապացույցների առկայության դեպքում տուժող կողմն իրավունք ունի պահանջել վնասների հատուցում մյուս կողմից և արտադատական կարգով միակողմանի հրաժարվել Պայմանագրի կատարումից:

10 Այլ պայմաններ

10.1 Կողմերը սույնով պարտավորվում են Պայմանագրի կնքման և կատարման առնչությամբ Կողմերին հայտնի դարձած, ինչպես նաև մյուս Կողմի բացահայտած տեղեկատվությունը չհրապարակել, չտարածել, երրորդ անձանց հայտնի չդարձնել, ինչպես նաև երրորդ անձանց նման տեղեկություններ հայթայթելու հնարավորություն ուղղակիորեն կամ անուղղակիորեն չընձեռել, բացառությամբ այն դեպքերի, երբ տեղեկատվությունը գաղտնի չի համարվում, քանի որ.

10.1.1 նախապես հայտնի է ընդունող Կողմին այլ իրավաչափ աղբյուրներից/եղանակով,

10.1.2 հանդիսանում է կամ դառնում է հասարակայնորեն հասանելի,

10.1.3 թույլատրված է հրապարակման համապատասխան Կողմի գրավոր համաձայնությամբ:

10.2 Պայմանագրի 10.1 կետով Կողմերի համար սահմանված պարտավորությունը գործում է Պայմանագրի գործողության ողջ ժամկետի ընթացքում, ինչպես նաև Պայմանագրի գործողության ժամկետը լրանալուց հետո անորոշ ժամկետով:

10.3 Պայմանագրի բոլոր փոփոխություններն ու լրացումները վավեր են, եթե դրանք կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի ներկայացուցիչների կողմից: Այդ փոփոխություններն ու լրացումները կցվում են Պայմանագրին և հանդիսանում են նրա անբաժանելի մասը:

10.4 Պայմանագրով չկարգավորվող իրավահարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրության համաձայն:

10.5 Եթե Պայմանագրի որևէ հոդված կամ հոդվածի կետ ամբողջությամբ կամ մասնակիորեն անվավեր, անիրագործելի կամ օրենսդրությանը չհամապատասխանող է ճանաչվում, ապա դա չի ազդում Պայմանագրի մյուս հոդվածների և կետերի վավերության վրա: Սույն Պայմանագրի որևէ հոդված կամ կետ անվավեր կամ անիրագործելի ճանաչվելու դեպքում, Կողմերը համաձայն են անմիջապես համատեղ բանակցել բարյացակամության ոգով՝ փորձելով տվյալ հոդվածը կամ կետը փոխել այնպես, որ այն համարվի վավեր և կիրառելի, ինչպես նաև առավել հնարավոր չափով արտացոլի Կողմերի միջև ի սկզբանե ձեռք բերված նպատակը համապատասխան հարցի կամ հարցերի կարգավորման վերաբերյալ:

10.6 Պայմանագիրը կնքված է հայերենով երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

11 Կողմերի հասցեները, վավերապայմանները և ստորագրությունները

11.1 Սույնով Կողմերն համաձայնում են, որ միմյանց հետ ցանկացած հաղորդակցում/ծանուցում/փաստաթուղթ, որը կապված է Պայմանագրի գործողության ընթացքում

Կողմերի իրավունքների, պարտականությունների կամ պատասխանատվության սահմանման, փոփոխման կամ դադարեցման կամ Պայմանագրից բխող ցանկացած պահանջի կամ այլ հարցերի հետ, կատարվում է սույն Պայմանագրում նշված էլեկտրոնային փոստի և/կամ պաշտոնական էլեկտրոնային փոստի /առկայության դեպքում/ միջոցով, իսկ դրանց բացակայության դեպքում սույն Պայմանագրում նշված փոստային հասցեով առաքման եղանակով, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով կամ ՀՀ օրենսդրությամբ: Ընդ որում, Մատակարարը համարվում է պատշաճ ծանուցված, երբ ծանուցումն ուղարկվել է Մատակարարի՝ Գնորդին տրամադրած պաշտոնական և/կամ այլ էլեկտրոնային փոստի հասցեով, և առկա է այն ստանալու մասին էլեկտրոնային հավաստում, եթե նույնիսկ բացակայում է այն կարդալու մասին էլեկտրոնային հավաստումը: Այս դեպքում Մատակարարը համարվում է պատշաճ ծանուցված ծանուցումն ստանալուն հաջորդող օրվանից:

Գնորդ՝
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 2
ՀՎՀՀ՝ 02502212
ՀՀ ԿԲ Թ/Հ 103002101576
office@ameriabank.am
Իրավասու անձ՝

_____

Մատակարար՝
_____
Հասցե _____
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ _____
ՀՎՀՀ _____
Էլ. Փոստի հասցե_____
Տնօրեն՝

_____